ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 փետրվարի 2026թ. **N 16–Ն**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 11-ի «Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերը սահմանելու մասին» թիվ 25-Ն որոշման՝

1) 1-ին կետով սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

2) 2-րդ կետի առաջին պարբերությունում «գրանցումն իրականացնող ընտրական հանձնաժողով» բառերը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողով» բառերով,

3) 2-րդ կետն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն որոշման առաջին կետով սահմանված հավելվածի թիվ 3 և 5 ձևերով սահմանված որոշումները՝ կուսակցության ընտրական ցուցակում առնվազն առաջին երեք տասնյակ թեկնածուներին, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում մինչև երեք տասնյակ թեկնածուներին հաստատելու և առաջադրելու մասին, պարտադիր են միայն Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի փետրվարի 24
ք. Երևան

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2026 թ. փետրվարի 24-ի N 16-Ն որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2021 թ. մայիսի 11-ի N 25-Ն որոշման

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

Ձև 1
(Կուսակցության դիմումի օրինակելի ձև)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ԴԻՄՈՒՄ

1. _____ կուսակցությունը դիմում է
(նշվում է կուսակցության անվանումը)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 20__ թվականի _____ «___»-ի ընտրություններին մասնակցելու համար:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ կից ներկայացվում են գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

1) կուսակցության կանոնադրությունը,

2) կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի որոշումները՝ ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ,

3) կուսակցության ընտրական ցուցակը (____ թերթ),

4) ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուների գրավոր հայտարարությունները՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին,

5) նվազագույն աշխատավարձի 7.500-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը,

6) տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին,

7) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի պատճենները կամ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված տեղեկանքը (տեղեկանքները),

8) ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ բոլոր անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

2. _____կուսակցության լիազոր ներկայացուցիչներն են՝
(նշվում է կուսակցության անվանումը)

1) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայր և պաշտոն (զբաղմունք) _____

Էլ. փոստի հասցե _____

Հեռախոս _____

2) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայր և պաշտոն (զբաղմունք) _____

Էլ. փոստի հասցե _____

Հեռախոս _____

3) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը) _____

Էլ. փոստի հասցե _____

Հեռախոս _____

Առդիր՝ ___ թերթ:

_____

Կուսակցության ղեկավարի անուն, ազգանուն, ստորագրություն

Կ.Տ.

[դիմումը ներկայացնելու օր, ամիս, տարեթիվ]

Ձև 2
(Կուսակցությունների դաշինքի դիմումի օրինակելի ձև)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ԴԻՄՈՒՄ

1. _____ կուսակցությունների դաշինքը դիմում է
(նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 20__թվականի _____ «____»-ի ընտրություններին մասնակցելու համար:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ կից ներկայացվում են գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

1) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունները,

2) կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցությունների համագումարների և մշտապես գործող ղեկավար մարմինների որոշումները՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը հաստատելու և առաջադրելու վերաբերյալ,

3) կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը (____թերթ),

4) կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած ընտրական ցուցակը,

5) ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուների գրավոր հայտարարությունները՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին,

6) նվազագույն աշխատավարձի 15.000-ապատիկի չափով ընտրական գրավի մուծման անդորրագիրը,

7) տեղեկանք՝ ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին,

8) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթերի պատճենները կամ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված տեղեկանքը (տեղեկանքները),

9) ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածուների՝ բոլոր անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

2. _____ կուսակցության լիազոր ներկայացուցիչներն են՝
(նշվում է կուսակցության անվանումը)

1) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայր և պաշտոն (զբաղմունք) _____

Էլ- փոստի հասցե _____

Հեռախոս _____

2) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայր և պաշտոն (զբաղմունք) _____

Էլ- փոստի հասցե _____

Հեռախոս _____

3) Ազգանուն _____

Անուն _____ Հայրանուն _____

Ծնված _____ / _____ / _____
օր ամիս տարեթիվ

Անձը հաստատող փաստաթուղթ _____ / _____
համար

Աշխատանքի վայր և պաշտոն (զբաղմունք) _____

Էլ- փոստի հասցե _____

Հեռախոս _____

Առդիր՝ ___ թերթ:

_____

Կ.Տ. **Կուսակցության ղեկավարի անուն, ազգանուն, ստորագրություն**

_____

Կ.Տ. **Կուսակցության ղեկավարի անուն, ազգանուն, ստորագրություն**

[դիմումը ներկայացնելու օր, ամիս, տարեթիվ]

Ձև 3
(Կուսակցության համագումարի որոշման օրինակելի ձև)

[Նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N __
[Նշվում է որոշումն ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը]

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ [Նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ [Նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԱՋԻՆ ___ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածով՝ **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության համագումարը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության ընտրական ցուցակում առաջին _____ թեկնածուներին և առաջադրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի **[նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը]** ընտրություններին (ընտրական ցուցակը կցվում է):

[**իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն**]
Կ.Տ

Ձև 4
(Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշման օրինակելի ձև)

[Նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
[նշվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անվանումը]

ՈՐՈՇՈՒՄ N
[Նշվում է որոշումն ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը]

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ [նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ [նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածով, հիմք ընդունելով **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության համագումարի **[նշվում է որոշման ընդունման օրը, ամիսը, տարեթիվը, անվանումը և համարը]** որոշումը՝ **[նշվում է կուսակցության անվանումը և կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անվանումը]**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության ընտրական ցուցակը և առաջադրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի **[նշվում է ընտրության օր, ամիս, տարեթիվ]** ընտրություններին (ընտրական ցուցակը կցվում է):

[**իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն**]
Կ.Տ

Ձև 5
(Կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցության համագումարի որոշման օրինակելի ձև)

[Նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ
[նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N __
[Նշվում է որոշումն ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը]

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ [նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը] ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ [նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԱՌԱՋԻՆ _____ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածով՝ **[նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]** կուսակցությունների դաշինքում ընդգրկված **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության համագումարը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել **[նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]** կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում առաջին _____ թեկնածուներին և առաջադրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի **[նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը]** ընտրություններին (ընտրական ցուցակը կցվում է):

[**իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն**]
Կ.Տ

Ձև 6

**(Կուսակցությունների դաշինքի անդամ
կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի որոշման օրինակելի ձև)**

[Նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ
[Նշվում է կուսակցության անվանումը] ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
[նշվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անվանումը]

ՈՐՈՇՈՒՄ N __
[Նշվում է որոշումն ընդունելու օրը, ամիսը, տարեթիվը]

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ [նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը]
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ [նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածով, հիմք ընդունելով **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության համագումարի **[նշվում է որոշման ընդունման օրը, ամիսը, տարեթիվը, անվանումը և համարը]** որոշումը՝ **[նշվում է կուսակցության անվանումը և կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անվանումը]**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել **[նշվում է կուսակցությունների դաշինքի անվանումը]** կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը և առաջադրել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի **[նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը]** ընտրություններին (ընտրական ցուցակը կցվում է):

[**իրավասու անձի անուն, ազգանուն և ստորագրություն**]

Կ.Տ

Ձև 7

ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

[Նշվում է կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, դաշինքում ընդգրկված կուսակցության անվանումը]

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Սեռ	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Կուսակցական պատկանելություն	Անձը հաստատող փաստաթղթի համար (անձնագրի դեպքում նաև՝ սերիա)	Հանրային ծառայության համարանիշ	Հաշվառման վայր	Աշխատանքի վայր, պաշտոն (զբաղմունք)
ՄԱՍ I								
ՄԱՍ II								
		I. Ազգային փոքրամասնության անվանումը						
1								
2								
3								
4								
		II. Ազգային փոքրամասնության անվանումը						
1								
2								
3								
4								
		III. Ազգային փոքրամասնության անվանումը						
1								
2								
3								
4								
		IV. Ազգային փոքրամասնության անվանումը						
1								
2								

3								
4								

1. Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի «Մաս I»-ում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը:

2. Ընտրական ցուցակի «Մաս I»-ում ընդգրկվում է ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու:

3. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի «Մաս I»-ում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

4. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի «Մաս II»-ի որևէ բաժնում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ չընդգրկելու դեպքում՝ համապատասխան բաժինը չի լրացվում:

Ձև 8

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ես՝ _____,
անուն, հայրանուն, ազգանուն

տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի **[նշվում է ընտրության օրը, ամիսը, տարեթիվը]** ընտրություններին **[նշվում է կուսակցության անվանումը]** կուսակցության ընտրական ցուցակում որպես պատգամավորի թեկնածու գրանցվելու համար:

[թեկնածուի ստորագրություն]

[ստորագրման օր, ամիս, տարեթիվ]»: